ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

DOI: 10.57192/18291864-2024.3-210

Աղասի Պ. Ազիզյան

ԿԱՐԵՎՈՐ ՄԻ ՃՇՏՈՒՄ ԵՎ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ*

«Վէմ» համահայկական հանդեսի 2024 թվականի թիվ 1 (85) համարի (հունվար–մարտ) 245–258 էջերում լույս տեսած պատմ. գիտ. թեկնածու **Միեր Ա. Հարությունյանի** «Ազգային–պետական գործչի հուշերը» վերտառությամբ գրախոսականում տեղ են գտել մի քանի անճշտություններ:

Մասնավորապես.

1. Գրախոսը, չգիտես ինչու, հաճախ հիշատակում է ինչ–որ Մայքլ Բաբայանի անունը, որն իբրև թե մեծ դերակատարություն է ունեցել «Զաքար Յոլյանի «Անցեալի յուշեր»» գրքի կազմության գործում՝ «տրամադրել էր գրքում ներառված մի քանի անտիպ գրություններ, լուսանկարներ, ինչպես նաև օժանդակել ծանոթագրությունների կազմմանը» և ապա՝ «փաստական ու գիտաճանաչողական հարուստ նյութերը մանրակրկիտ կերպով պատկերազարդվել են գրքում հիշատակված ժամանակի գործիչների դիմանկարներով ու խմբանկարներով, որոնք հիմնականում (ընդգծումը մերն է, Ա. Ա.) տրամադրել է երիտասարդ պատմաբան Մայքլ Բաբայանը, որը Հայաստանի Հանրապետության գործիչների լուսանկարների ու փաստաթղթերի հայթայթման, հավաքման ու հանրահռչակման գործում շնորհակալ գործ է կատարել» (տես էջ 253): Այնուհետև տողատակում հղում է արվում նաև նրա գրքի տվյալներին:

Սակայն այս պարագայում մեզ հայտնի չէ, թե Միեր Ա. Հարությունյանը որտեղի՞ց է քաղել այդ տեղեկությունները. արդյոք Մայքլ Բաբայանի՞ց, Յոլյանի գիրքը կազմողներից՝ Աշոտ Սիմոնյանի՞ց, թե՞ պարզապես դրանք իր՝ պատմաբանի պայծառ մտքի երևակայության արդյունքն են:

Տողերիս գրողը ծանոթ չէ Մայքլ Բաբայանին, և չեմ ուզում խոսել նրա մասին, բայց ինձ նաև ծանոթ չէ նրա մասնակցությունը մեր գրքի կազմության գործում:

Եթե կազմողներիցս Աշոտ Սիմոնյանին օժանդակել է մի ինչ–որ երրորդ անձ՝ նկարներ և հոդվածներ տրամադրելով ու նրան աջակցելով ծանոթագրությունների կազմման գործում, ինչպես ակնարկում է Մ. Հարությունյանը, դա պարզապես կատարվել է անձնապես իրենց միջև: Ամեն դեպքում չեմ հիշում, որ Ա. Սիմոնյանը երբևէ ակնարկած լինի ինչ–որ մեկին շնորհակալություն հայտնելու անհրաժեշտության մասին:

Ի լուսաբանություն հայտնեմ, որ իմ տեղեկություններով՝ գրքում տեղ են գտել միայն չորս թե հինգ անտիպ լուսանկարներ, որոնցից մեկի ներքևում հենց Աշոտ Սիմոնյանի ցանկությամբ նշված է, թե որտեղից է առնված այն (տե՛ս էջ 487), իսկ մյուսները, վստահորեն կարող եմ պնդել, որ Մ. Բաբայանին չեն պատկանում:

2. Գրախոսության հեղինակը նաև ակնարկում է, որ Ա. Ազիզյանի «մտքով իսկ չի անցել, թե կազմողներին հաջողվել է մեկտեղել Ջ. Յոլյանի **գրչին պատկանող** (ընդգծումը մերն է, Ա. Ա.) բոլոր հրապարակումները» (էջ 246), ապա տողատակում հիշատակում է. «Այս առումով հատկանշելի է Հայաստանի խորհրդարանի անդամներ Գերասիմ Բալայանի և Ջաքար Յոլյանի **համատեղ զեկուցումը** (ընդգծումը մերն է՝ Ա. Ա.) Լեռնային Ղարաբաղում 1918 թ. հունիսից մինչև 1920 թ. մայիսի 26-ը տեղի ունեցած դեպքերի վերաբերյալ...», ապա ընթերցողին ներկայացնում է, թե ինքը երբ և որտեղ է այն հրապարակել:

Այստեղ ևս թյուրիմացության մեջ է պատմաբան Միեր Հարությունյանը: Զեկուցումը, որի տակ ստորագրել են Գ. Բալայանը և Ջ. Յոլյանը ուղղակիորեն չի վերաբերում անձամբ Յոլյանին: Այն, ինչ որ **հանձնաժողովի** նիստերի արձանագրություն-զեկույց է, որի վրա որպես քարտուղարի՝ կա նաև Յոլյանի ստորագրությունը: Եթե Յոլյանի փոխարեն ուրիշը լիներ քարտուղարը, ապա բնականաբար չէր լինի նաև Յոլյանի ստորագրությունը:

Երկրորդ՝ շուրջ 50 էջից բաղկացած այդ զեկույցի հրապարակումը, ընթերցողին շեղելով բուն նյութից, մխրճելու էր այն ժամանակվա Արցախի դեպքերի հորձանուտը:

Միգուցե նրա կենսագրության մեջ մեկ տողով կարելի էր հավելել, որ նա եղել է այդ հանձնաժողովի քարտուղարը թեև ներկա պարագայում դա էական հանգամանք չի կարող համարվել:

Միեր Հարությունյանի գրախոսականում տեղ է գտել նաև անձիս վերաբերյալ անճիշտ տեղեկություն, որին հարկ չեմ համարում անդրադառնալու:

Վերջում ցանկանում եմ հայտնել ափսոսանքս, որ ազգային ազատագրական պայքարի և Հայաստանի Հանրապետության շրջանի աչքի ընկնող գործիչներից մեկի գրավոր ժառանգության հիման վրա կազմված գրքի գրախոսությամբ հանդես եկած պատմաբան Միեր Ա. Հարությունյանը կարևորել է հատկապես վերոհիշյալ երկու վիճելի, գրքի բովանդակության հետ էական առնչություն չունեցող հանգամանք: Ինձ մեծ զարմանք պատճառեց նաև այն, որ «Վէմ»-ի խիստ բծախնդիր ու պատասխանատու գլխավոր խմբագրի ուշադրությունից վրիպել են վերոնշյալ հարցերը և հոդվածը հրապարակվել է անվերապահորեն:

Աղասի Պ. Ազիզյան – հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է ՀՅ Դաշնակցության ու Հայաստանի Հանրապետության պատմության հիմնա-

հարցերը ու մանավանդ՝ «Նեմեսիս» գործողության մանրամասների քննությունը:

Էլ. հասցե՝ aghassiazizian@aol.com

Aghasi P. Azizian

ONE IMPORTANT CLARIFICATION AND CONSIDERATIONS

Агаси П. Азизян

ОДНО ВАЖНОЕ УТОЧНЕНИЕ И РАССУЖДЕНИЯ

Խմբագրության կողմից

Մեր ընթերցողներին հիշեցնում ենք, որ «ՎԷՄ» հանդեսի «**Քննարկումներ**» բաժնում հրապարակվող հոդվածները ոչ միշտ են արտահայտում խմբագրության տեսակետները:

Այս գրության երկու հիմնական թիրախների՝ Մայքլ Բաբայանի և Աշոտ Սիմոնյանի հետ Աղասի Պ. Ազիզյանի բազմամյա բանավեճերի առարկան Սփյուռքից ստացված փաստաթղթերի պատկանելության հարցն է: «ՎԷՄ» հանդեսին հայտնի են այդ փաստաթղթերի ծագման իրական վայրերը. մնացածը հայագիտության հետ որևէ կապ չունի: Ավելին, Աղասի Ազիզյանի ու Աշոտ Սիմոնյանի կազմած գիրքը գրախոսվել է ոչ այնքան նրա գիտական որակների, որքան **Զաքար Յոլյանի** հիշատակը հարգելու համար:

Իսկ Աղասի Պ. Ազիզյանի երրորդ թիրախ Մհեր Ա. Հարությունյանի գրախոսության մեջ տեղ գտած «կարևոր անճշտության» մասին պնդումը սովորական ենթադրություն է, լավագույն դեպքում՝ վարկած, որն ապացուցման կարիք ունի: Գ. Բալայանի և Զ. Յոլյանի ստորագրություններն իրենց տեղերում են, Զ. Յոլյանի ձեռագիրը ստուգված է: Իսկ «հանձնաժողովի արձանագրության»՝ ուղղակիորեն Զ. Յոլյանին չվերաբերելու վարկածը հիմնավորելու խնդիրը Աղասի Ազիզյանի՝ սույն հրապարակման փաստորեն **միակ գիտական թեզն** է, որը նա չի կարողացել ապացուցել նոր փաստեր բերելու միջոցով:

Ուստի գիտության հետ կապ չունեցող այս բանավեճին վերջ դնելու համար հրապարակել ենք Աղասի Պ. Ազիզյանի՝ մեր խմբագրությանը ներկայացրած դիտարկումները՝ առաջնորդվելով մեծ պատմագետ **Նիկողայոս Ադոնցի** իմաստուն կարգախոսով. «***Լռե՛նք. կայ վսէմ լռութիւն, որի աղաղակները լսելի են ամենուրեք, եւ կան աղաղակներ, որ կորչում են ընդհանուր լռութեան մէջ***»: